ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«14» 02 2023թ.
№ ԿԱՄԲ-216

«Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊԸ
տնօրեն՝ Ա. Բաղդասարյանին
հասցե՝ Ինտերշոր Չամբերս, Փ/Ա 4342, Ռոուդ
Թաուն, Տորտոլա, Բրիտանական Վիրջինյան կղզիներ,

ՀՀ պաշտպանության նախարարության և «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊ ընկերության միջև 30.06.2022թ. կնքված N ՄԱԱՊՁԲ-22-4-11 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը ոչ ուշ, քան 2023թ. հունվարի 4-ը պետք է մատակարարեր վերը նշված Պայմանագրով նախատեսված ապրանքներ, որոնցից 3-րդ չափաբաժնի մասով նախատեսված 2500 հատ ապրանքներից՝ 1500 հատը, 4-րդ չափաբաժնի մասով՝ 1300 հատից 500-ը և 5-րդ չափաբաժնի մասով՝ 1000 հատից 762-ը չի մատակարարվել, իսկ 1-ին, 2-րդ, 7-րդ, 8-րդ և 13-ից-19-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները չեն մատակարարվել ընդհանրապես:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարի 14-ին միակողմանի մասնակի՝ նշված չափաբաժինների մասով, լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 1 866 024 043 ՀՀ դրամ՝ որպես տույժ, որից 117 851 278 ՀՀ դրամը Պայմանագրի 6.2 կետի համաձայն, որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ, իսկ մնացած 1 748 172 765 ՀՀ դրամը ՀՀ կառավարության 02.06.2022թ. թիվ 821-Ա Գ որոշման N 1 հավելվածի և Պայմանագրի 8.13 կետի համաձայն:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ձեռնարկում է միջոցներ՝ «Ռոյալսիս Էնջինիրինգ» ՍՊ ընկերության կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված կանխավճարի ապահովման գանձման ուղղությամբ, որը կազմում է 7 232 681 196 ՀՀ դրամ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am